

ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱԼԳՈՐԻԹՄՆԵՐ-0013

ԳՈՒՄԱՐ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՎՐԱ

Տրված է n տարրից բաղկացած միաչափ զանգված, որի տարրերը ամբողջ թվեր են: Ձեզ տրվում են m հատ հարցումներ, որոնցից յուրաքանչյուրը պահանջում է հաշվել տրված միաչափ զանգվածի այն տարրերի գումարը, որոնց ինդեքսները փոփոխվում են x -ից մինչև y -ը ներառյալ:

Պահանջվում է գրել ծրագիր, որի արդյունքում կստացվի յուրաքանչյուր հարցման պատասխանը:

Մուտքային տվյալներ.

Մուտքի առաջին տողում տրված են n ($1 \leq n \leq 100000$) բնական թիվը՝ միաչափ զանգվածի տարրերի քանակը և m ($1 \leq m \leq 100000$) բնական թիվը՝ հարցումների քանակը:

Մուտքի երկրորդ տողում տրված են միաչափ զանգվածի տարրերը, որոնք բացարձակ արժեքով չեն գերազանցում 1000-ը:

Մուտքի հաջորդ m տողերում տրված են յուրաքանչյուր հարցմանը համապատասխանող x և y ($1 \leq x \leq y \leq n$) բնական թվերը մեկը մյուսից անջատված բացատանիշերով:

Ելքային տվյալներ.

Ելքում պետք է ստանալ խնդրի պատասխանը՝ յուրաքանչյուր հարցման պատասխան արտածելով առանձին տողերում:

Օրինակներ.

N	stdin	stdout
1	5 2 1 2 3 4 5 2 4 3 5	9 12
2	5 3 1 2 3 4 5 1 1 1 3 1 5	1 6 15